



ՄՈՒՐԲ ԶԱԿՈՐ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ Ե ԿԵՂԵՅԻ



ՏՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ

14 ՅՈՒՆԻՍ 2009

Կիրակնօրեայ ընթերցումներ	Էջ 1
Տեսիլներու Մասին	Էջ 2
Յիսուս Կը Կանչէ Մատթէոսը	Էջ 5
Ծանուցում	Էջ 8

ԸՆԹԵՐՑՈՒՄ
ԱՌԱԿԱՑ ԳԻՐՔԷՆ
 (9.1-6)

Իմաստութիւնը իր տունը շինեց,
 եօթը սիւներու վրայ կանգնեց զայն.
 Իր գոհերը մորթեց,
 համեմով խառնեց իր գինին
 եւ կոչունքի սեղանը պատրաստեց:
 Ապա իր ծառաները ղրկեց
 որպէսզի քաղաքին բարձունքներէն կանչեն իր
 բեռնով.
 «Ո՛վ անզգամներ, ինծի եկէք»,
 եւ պակասամիտներուն ըսեն.
 «Եկէ՛ք իմ հացէս կերէք
 եւ իմ պատրաստած գինիէս խմեցէք.
 Թողուցէ՛ք անզգամութիւնը, որպէսզի
 ապրիք.
 Իմաստութիւնը փնտռեցէք, որպէսզի
 փրկուիք,
 եւ խոհեմութեան ճամբան բռնեցէք»:

ԸՆԹԵՐՑՈՒՄ
ՋԱՔԱՐԻԱ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ
 (3.7-4.9)

Այսպէս կ'ըսէ Ամենակալ Տէրը.- «Եթէ իմ
 ճամբաներէս քալես եւ իմ հրահանգներս
 կատարես, քեզ իմ տաճարիս կառավարիչ եւ
 իմ սրահներուս պահապան պիտի կարգեմ, եւ
 հոս կանգնած հրեշտակներուն պէս՝ ազատ
 պիտի ըլլաս սրբարանս՝ իմ ներկայութեանս
 մտնելու: Լսէ՛ ուրեմն, ո՛վ Յեսուս, մեծ
 քահանայապետ, դուն եւ քու դիմացդ նստած
 քահանայ ընկերներդ, որովհետեւ դուք գալիք
 բարիքներուն պատկերացումն էք: Ահա ես
 պիտի ղրկեմ իմ ծառաս, որ Ընձիւղ պիտի
 կոչուի: Որովհետեւ ահա Յեսուսի առջեւ քար

մը կը դնեմ, որ եօթը երես ունի: Անոր վրայ
 ես իմ արձանագրութիւնս պիտի փորագրեմ:
 Մէկ օրուան մէջ պիտի վերցնեմ այս երկրին
 անօրէնութիւնը: Երբ այդ օրը գայ,- կ'ըսէ
 Ամենակալ Տէրը,- ձեզմէ իւրաքանչիւրը իր
 ընկերը պիտի հրաւիրէ իր որթատունկին կամ
 թղենիին տակ հանգչելու»:

Հրեշտակը, որ հետս կը խօսէր, վերադարձաւ
 եւ զիս արթնցուց ճիշդ ինչպէս քնացած մէկը
 կ'արթնցնեն, եւ հարցուց ինծի.

- Ի՞նչ կը տեսնես:

Պատասխանեցի.

- Չոյլ ոսկիէ աշտանակ մը կը տեսնեմ,
 որուն վրայ գնտաձեւ ձիթաման մը եւ եօթը
 ճրագներ կան, իւրաքանչիւրը յատուկ
 բերանով մը: Աշտանակի կողքին երկու
 ձիթեմիներ կան, մին գնտաձեւ ձիթամանին
 աջին, իսկ միւսը ձախին:

Ապա հարցուցի ինծի հետ խօսող հրեշտակին.-
 «Ի՞նչ են ասոնք, ո՛վ Տէր»: Եւ պատասխանեց.
 «Չե՞ս գիտեր ինչ են ասոնք»: «Ո՛չ, Տէր», -
 պատասխանեցի: Այն ատեն հրեշտակը ինծի
 բացատրեց.

«Տէրը այս պատգամը կու տայ Զօրաբաբելի.-
 "Մեծ զօրքով կամ զէնքի ոյժով չէ, որ պիտի
 յաջողիս,- կ'ըսէ Ամենակալ
 Տէրը,- այլ իմ Հոգիովս:
 Ո՛չ մէկ դժուարութիւն
 պիտի կանգնի դիմացդ,
 եւ նոյնիսկ եթէ լերան
 մը պէս ըլլան՝ պիտի
 հարթուին դաշտի նման:
 Իմ ժառանգութիւնս եղող
 տաճարին վերջին քարը դո՛ւն պիտի դնես եւ
 այնտեղ իմ շնորհքս պիտի բնակի"»:

Տէրը դարձեալ ինծի խօսեցաւ, ըսելով.
 «Զօրաբաբելի ձեռքերը դրին այս տան հիմերը
 եւ նոյն այդ ձեռքերը պիտի աւարտեն անոր
 շինութիւնը: Երբ ասիկա կատարուի՝ պիտի
 գիտնաք, թէ Ամենակալ Տէրը ղրկեց զիս
 ձեզի»:

Մեծ զօրքով
 կամ զէնքի
 ոյժով չէ,
 որ պիտի
 յաջողիս, այլ
 իմ Հոգիովս:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ԵՐԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ
(9.1-10)

Արդարեւ, առաջին Ուխտը իրեն յատուկ պաշտամունքի կանոններ եւ երկրաւոր սրբարան մը ունէր, երկու վրաններէ բաղկացած: Նախ կար արտաքին վրանը, Սրբութիւն կոչուած, ուր կային աշտանակը եւ առաջաւորութեան հացերուն սեղանը: Ապա երկրորդ վարագոյրին ետին կար միւս վրանը, Սրբութիւն Սրբութեանց կոչուած, ուր կային ոսկեայ սեղանը՝ խունկ ծխելու համար եւ ուխտի Տապանակը՝ ներսէն ու դուրսէն ոսկեպատ, որուն մէջ կը պահուէին մանանայով լեցուն ոսկեայ սափորը, Ահարոնի ծաղկած գաւազանը եւ ուխտի տասնաբանեայ պատուիրաններուն քարէ տախտակները: Տապանակին վրայ կային Աստուծոյ փառքը ներկայացնող քերովբէները, որոնք իրենց թեւերով հովանի կ'ընէին Քառութիւն կոչուած կափարիչին վրայ: Ուրիշ մանրամասնութիւններու մասին խօսիլ չեմ ուզեր հիմա:

Սրբարանը այդպէս յարդարուած էր ուրեմն: Քահանաներ պաշտամունքը կատարելու համար մշտականօրէն կը մտնէին առաջին վրանը: Բայց երկրորդ վրանը միայն քահանայապետը կը մտնէր տարին մէկ անգամ, այն ալ՝ իր եւ ժողովուրդին անգիտութեամբ գործած մեղքերուն փոխարէն զոհի արիւնը մատուցանելու համար Աստուծոյ: Այդ բոլորով Սուրբ Հոգին ցոյց կու տար թէ որքան ատեն որ արտաքին վրանը կանգուն կը մնար՝ բուն Սրբարանին մուտքը մեր առջեւ փակ էր, ինչ որ խորհրդանշականօրէն կը

ցուցնէ թէ ներկայիս այդ Սրբարանը բաց է մեր առջեւ: Այնտեղ մատուցուած նուէրներն ու զոհերը չէին կրնար մաքրել պաշտամունքը մատուցանողին խղճատանքը, որովհետեւ միայն ուտելիքի, խմելիքի եւ մարմնական մաքրութեան համար սահմանուած պէսպէս լուացումներու կապուած էին: Եւ այդ կարգերը ի զօրու էին մինչեւ ուղղութեան,

...
ներկայիս
այդ
Սրբարանը
բաց է
մեր առջեւ:

այսինքն նոր կարգերու հաստատման ժամանակը:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ
(10.22-30)

Ձմեռ էր. Երուսաղէմի մէջ տաճարին Նաւակատիքի տօնակատարութիւնը տեղի կ'ունենար: Յիսուս տաճարին Սողոմոնի սրահին մէջ կ'երթեկէր, երբ իր շուրջ հաւաքուեցան հրեաները եւ հարցուցին. «Մինչեւ ե՞րբ մեր հոգին պիտի հանես. եթէ դուն ես Քրիստոսը՝ յստակ ըսէ՛ մեզի»:

Յիսուս պատասխանեց. «Արդէն իսկ ձեզի ըսած եմ, սակայն չէք հաւատար: Այդ գործերը որ Հօրս անունով կը կատարեմ, անոնք իսկ կը վկայեն՝ թէ ո՛վ եմ ես: Բայց դուք չէք հաւատար, որովհետեւ իմ ոչխարներէս չէք: Ես ոչխարներս կը ճանչնամ. անոնք ձայնս կը լսեն եւ կը հետեւին ինծի, ու ես անոնց յաւիտենական կեանք կու տամ, անոնք բնաւ պիտի չկորսուին: Ո՛չ ոք պիտի կարենայ զանոնք յափշտակել իմ ձեռքէս: Հայրս այդ ոչխարները ինծի տուաւ, եւ ոչ ոք կրնայ յափշտակել զանոնք իմ Հօրս ձեռքէն, որովհետեւ Հայրս բոլորէն աւելի մեծ է: Ես եւ Հայրս մէկ ենք»:

Ես եւ Հայրս
մէկ ենք:

ՏԵՍԻԼՔՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ
ԳԱՌՆԻԿ Ք.Գ.

Ի՞նչ է տեսիլքը: Աստուածաշունչին մէջ ինչպէ՞ս հասկցուած է, ինչպէս տեսնուած է անոր պաշտօնը, եւ ո՞ր մէկ տեսիլքը վաւերական է, ո՞ր մէկը՝ անվաւեր:

Նախ բառարանով տրուած չորս հոմանիշներ թուեմ. Աստուծոյ կողմէ իրականութիւններու կամ ճշմարտութիւններու երեւում, յայտնութիւն, ճշմարիտ երազ եւ քունի անուրջ («Նոր Բազիրք Հայկազեան Լեզուի»):

Աստուածաշունչին մէջ առաջին տեսիլքը յայտնուած է Աբրամի (Աբրահամ Նահապետի նախկին անունը):

Աստուած կը կանչէ Աբրամը եւ անոր կը

պատուիրէ ձգել իր երկիրը, ազգականները եւ հօրը տուներ, ու երթալ այն երկիրը, որ իրեն ցոյց պիտի տայ: Աբրամ կը կատարէ Տիրոջ պատուէրը եւ նառանէն կը մեկնի՝ երթալու համար Քանան: Կը հասնի ցոյց տրուած երկիրը եւ «Մօրէի կաղնին» կ'անցնի, կ'ըսէ դրուագը, ու կ'աւելցնէ. «Տէրը երեւցաւ Աբրամի ու ըսաւ.՝ Քու սերունդիդ պիտի տամ այս երկիրը» (տե՛ս Ծն 12.1, 5-7):

Այս երեւումը՝ տեսիլքի մէջ երեւում է, հաւանաբար: Անիկա Տիրոջ ինքնաերեւումն է: Բայց ո՛չ իբր կերպարանք երեւումը: Այլ միայն «Տէրը երեւցաւ», կ'ըսուի, եւ անմիջապէս Անոր խօսքը կ'արձանագրուի: Որեւէ տեսիլքի մէջ Տիրոջ կերպարանքին մասին ահնարկութիւն չկայ: Տեսիլքին մէջ չի գար Տիրոջ կերպարանքը: Յաջորդ օրինակին մէջ պիտի տեսնենք, որ Աստուած կ'ըսէ, թէ Ինք Մովսէսի հետ բերնէ բերան կը խօսի եւ ոչ թէ տեսիլքով, որովհետեւ Իր կերպարանքով կը կանգնի Մովսէսի դիմաց: Աբրահամի պատմութեան մէջ ալ Տիրոջ կերպարանաւոր յայտնուիլը նահապետին՝ տեսիլքով չըլլար: Այսպէս կը պատմէ Ծնունդներու գիրքը. «Տէրը երեւցաւ Աբրահամի Մամբրէի կաղնիներուն մէջ, երբ ան օրուան տաք ատենը վրանին դուռը նստեր էր: Եւ իր աչքերը վերցուց ու նայեցաւ, ահա երեք մարդիկ կայներ էին իրեն մօտ» (Ծն 18.1-2): Այդ երեքէն մէկը Տէրն էր:

Վերադառնալով Աբրամի: Ուշագրաւ է, որ Տէրը Աբրամի կ'երեւնայ Մօրէի կաղնին անցնելէ ետքը: Ինչո՞ւ այս ծառին յիշատակումը:

Նախ ըսեմ, որ երեւում եւ տեսիլք բառերը հոմանիշներ են: Տեսիլքին եբրայերէն բառ մըն է «մարէ»ն: Արդեօք «Մօրէ» անունը եւ «մարէ» բառը իրարու չե՞ն նմանիր:

Եւ երկրորդ: Անկասկած, Քանանի եւ չրջակայքին մէջ տարածուած էր ծառին տրուած սրբազան արժէքը: Մօրէի կաղնին սրբազան ծառ մըն էր: Եւ նկատի ունենալով, որ անիկա ուսուցիչ կը նշանակէ, ենթադրելի է թէ՛ անոր հովանիին տակ կրօնական գիտութիւն կը ջամբուէր կամ պատգամներ կը տրուէին: Արդ, Աբրամ Տիրոջ երեւման կ'արժանանար Մօրէի կաղնին անցնելէ ետքը, որ ըսել է, թէ այդ երեւումը պատահելիք իրականութիւն մը կանխաւ կը յայտնէր կամ բան մը կ'ուզէր սորվեցնել կամ կ'ուզէր պատգամ մը տալ: Տիրոջ ըսածն էր. «Քու սերունդիդ պիտի տամ այս երկիրը»:

Թէ ի՞նչ կայ ուսուցողական այս նախադասութեան մէջ՝ այլ առիթով մը անդրադառնալի նիւթ է եւ «խոստացուած երկիր» հասկացողութեան կը վերաբերի:

Այսպէս, Աստուածաշունչին առաջին

տեսիլքը մեզի կը յայտնուի իբր միջոց, որով Աստուած կանխաւ կը յայտնէ ըլլալիքը կամ կ'ուսուցանէ կամ կը պատգամէ: Ասիկա նոյնն է այլ տեսիլքներու ալ պարագային:

Այս երեւման մէջ կարեւոր տարր է ժամանակի հարցը: Կ'ըսէ. «պիտի տամ»: Ուրեմն, Աստուծոյ տեսիլքը ապագային համար է: Հետեւաբար, ինչ որ տեսիլքը կը սորվեցնէ՝ ապագային կը վերաբերի:

Մովսէսի պատմութեան մէջ, Ահարոն եւ Մարիամ անոր դէմ խօսած էին: Եւ Աստուած զանոնք կը կանչէ եւ իր բարկութիւնը կ'արտայայտէ, այսպէս ըսելով. «Եթէ ձեզմէ մէկը մարգարէ ըլլայ, ես Տէրս ինքզինքս տեսիլքի մէջ կը ճանչցնեմ անոր, կամ երազի մէջ կը խօսիմ անոր հետ: Բայց իմ ծառաս Մովսէս այնպէս չէ, ան իմ բոլոր տանս մէջ հաւատարիմ է: Անոր հետ բերնէ բերան, յայտնապէս կը խօսիմ եւ ոչ թէ առակով, ու անիկա Տիրոջ կերպարանքը կը տեսնէ: Ուստի իմ ծառայիս Մովսէսի դէմ խօսելու ինչո՞ւ չվախցաք» (Թւ 12.6-8):

Այս խօսքը կը յայտնէ, թէ տեսիլքի ճամբով Աստուծոյ ինքնապայտնութիւնը մարգարէներուն համար է: Մարգարէներն է, որ տեսիլք կ'ունենան: Մինչ Աբրամի տեսիլքին մէջ ըսուած խօսքը յստակ կը թուի, այստեղ կ'ըսուի, թէ տեսիլքները «առակով» են, այսինքն՝ այլաբանութիւններ են, այսինքն՝ ուրիշ բան կ'ըսեն քան իրենց ըսածը:

Աստուած Մովսէսը հաւատարիմ կը կոչէ, եւ անոր հետ իր ինքնապայտնութեան կերպին տարբերութիւնը ցոյց կու տայ:

Ուրեմն, Մովսէս մարգարէ չէ՞ր: Հապա Մովսէս ինք ըսած է. «Քու Տէր Աստուածդ քու եղբայրներուդ մէջէն ինծի պէս մարգարէ մը պիտի հանէ քեզի» (Բ. Օր 18.15):

Հետեւաբար, Տիրոջ ըսածը այն էր, թէ Մովսէս մարգարէի եւ միւս մարգարէներուն տարբերութիւնը կը կայանար անոր «հաւատարիմ» ըլլալուն մէջ: Ասիկա չի նշանակեր, թէ միւս մարգարէները Աստուծոյ հաւատարիմ չէին: Մովսէսի պարագային, այս մակդերին գործածութիւնը իր սովորական իմաստէն անդին՝ Աստուծոյ հետ եզակի յարաբերութիւն մը կը պատմէ: Արդէն այդ եզակի յարաբերութիւնը ցոյց տրուած է այսպէս. «Անոր հետ բերնէ բերան, յայտնապէս կը խօսիմ եւ ոչ թէ առակով, ու անիկա Տիրոջ կերպարանքը կը տեսնէ»:

Տեսիլքով Աստուծոյ երեւումը՝ Անոր «կերպարանք»ին աչքի առջեւ կանգնումը չէ: Տեսիլքին մէջ երեւցող Տէրը՝ իր «կերպարանք»ով չի կենար, այլ խօսքով՝ Անոր երեւնալը կերպ չունի, անկերպարան է, աննկարագրելի է:

Մովսէսի հետ Աստուծոյ հաղորդակցութիւնը

մօտիկ խօսակցութիւն էր, եւ ոչ թէ դէմյանդիմանական խօսակցութիւն մը, ինչպէս կը կարծուի. Աստուած անոր առջեւ կամ մօտ իր կերպարանքով կը կանգնէր եւ կը խօսէր: Աստուծոյ կերպարանքը տեսնելը՝ չի նշանակեր Անոր «երես»ը տեսնել: Աստուած ըսած է. «Դուն իմ երեսս չես կրնար տեսնել. վասնզի մարդ չի կրնար զիս տեսնել ու ապրիլ», ապա աւելցուցած՝ «Ահա քովս տեղ մը կայ ու ժայռին վրայ կայնէ: Եւ երբ իմ փառքս անցնելու ըլլայ՝ քեզ ժայռին խոռոչին մէջ դնեմ ու քեզ իմ ձեռքովս ծածկեմ, մինչեւ որ ես անցնիմ: Ետքը իմ ձեռքս պիտի վերցնեմ ու իմ ետեւէս պիտի տեսնես, բայց իմ երեսս պիտի չտեսնուի» (Ելք 33.20-23):

«Երես»ը, ուրեմն, խորհրդանշանն է Աստուծոյ ինքնութեան: Ոչ ոք կրնայ զայն տեսնել: Այնքան փառաւոր է անիկա, որ կարելի չէ դիմանալ անոր ճառագայթումին, կարելի չէ զայն տեսնել եւ ապրիլ: Շատ չընդիմ:

Ըսի, տեսիլքին մէջ երեւցող Տէրը՝ իր կերպարանքով չի կենար:

Եսայի մարգարէ տեսիլք մը ունի, ուր նկարագրած է Աստուծոյ հետ իր հանդիպումը եւ մարգարէութեան կոչուիլը: Գրած է. «Տէրը տեսայ, որ բարձր ու վերացած աթոռի վրայ նստեր էր: Անոր քղանցքը տաճարը կը լեցնէր: Վերի կողմը սերովբէները կը կենային անոր առջեւ, որոնց ամէն մէկը վեց թեւ ունէր: Երկուքով երեսներն կը ծածկէին, երկուքով ոտքերնին կը ծածկէին ու երկուքով կը թռչէին» (Ես 6.1-2): Ասիկա տեսնելէ յետոյ աղաղակած է. «Վա՛յ ինծի, ահա կը կորսուիմ... իմ աչքերս զօրքերու Տէրը, Թագաւորը տեսան» (նոյն 6.5):

Սակայն Եսայի Տէրը չէ տեսած, այսինքն՝ Անոր «երես»ը կամ Անոր ինքնութիւնը, որովհետեւ այդ տեսութիւնը չէ նկարագրած, այլ միայն յիշած է, թէ Անոր քղանցքը տաճարը կը լեցնէր: Առաւել, երբ սերովբէները իրենց երեսը կը ծածկէին, ինչպէս կրնար մարգարէն Տիրոջ նայիլ: Ուրեմն, ըստ Եսայիի, նոյնիսկ տեսիլքի մէջ Աստուած ան-նայելի է կամ նոյնիսկ տեսիլքի մէջ Աստուծոյ մօտիկ մարդիկ անգամ չեն կրնար Տիրոջ նայիլ:

Տեսիլքներ կան, որոնց մէջ Աստուած իր կամքը յայտնած է հրեշտակներու միջոցով, կամ մարդոց:

Հրեշտակային յայտնութեամբ տեսիլք է Յովհաննէս Մկրտիչի հօր՝ Զաքարիայի ունեցածը Տիրոջ սրբարանին մէջ: Այնտեղ, կ'ըսէ Ղուկաս աւետարանիչ, Զաքարիայի երեւցաւ Տիրոջ հրեշտակը, որ խոնկի սեղանին աջ կողմը կեցած էր»: Ծանօթ է դրուագը: Հրեշտակը կ'աւետէ ծնունդը անոր՝ որ պիտի պատրաստէ «Տիրոջ գալուստին նախապատրաստուած ժողովուրդը

մը» (Ղկ 1.8-17):

Մարդկային տիպարով աստուածային կամքի յայտնութեան տեսիլք ունեցած է Պօղոս առաքեալ: Ան տեսած է Յիսուսի հետեւորդ Անանիան, որ տեսիլքի մէջ իրեն մօտենալով, ձեռքերը դրած է իր գլխուն, որպէսզի իր կուրցած աչքերը վերստին տեսնեն (Գրծ 9.12):

Մովսէսի առիթով ըսուած է, թէ տեսիլքները առակաւոր են: Այլ խօսքով, տեսիլքները այլաբանական իմաստներ կը բովանդակեն. իրենց ըսածէն տարբեր կամ ուրիշ բաներ կ'ըսեն: Թէեւ կան տեսիլքներ՝ որոնց մէջ Աստուծոյ պատգամները յստակ բառերով կամ նախադասութիւններով են, սակայն աւելի շատ եւ լայն ու ընդարձակ են «առակաւոր» տեսիլքները, այսինքն անոնք՝ որ յստակ չեն եւ իրենց ըսածէն այլ բաներ կ'ըսեն կամ գաղտնիք մը կը յայտնեն (Դն 2.19): Ամենէն յայտնի օրինակը Յովհաննէսի Յայտնութեան Գիրքն է: Անոր ըսածները ծածուկ են, ուրիշ բաներ կ'ըսեն:

Ահա այստեղ կը ծագի հարցումը: Ինչպէ՞ս հասկնալ նման տեսիլքներ: Ո՞վ կամ որո՞նք կրնան հասկնալ:

Աստուածաշունչին մէջ ակնարկութիւն կայ տեսիլքներու հմտութեան (Բ. Մն 26.5). տեսիլքներու հմտաւ մարդիկ կային: Օրինակ՝ Զաքարիա մարգարէի մասին ըսուած է, թէ Աստուծոյ տեսիլքներուն հմտաւ էր կամ կը հասկնար (նոյն, անդ): Դանիէլ մարգարէի համար ալ ըսուած է, թէ ամէն տեսիլք եւ երազ կը հասկնար (Դն 1.17):

Ինչպէ՞ս է, որ տեսիլքներու հմտաւ մարդիկը կը հասկնային:

Նախ՝ Աստուած անոնց տուած կ'ըլլար «ամէն դպրութեան ու իմաստութեան մէջ գիտութիւն ու հանճար» (Դն 1.17):

Երկրորդ՝ անոնք «Աստուծոյ գիտութիւնը» կը խնդրէին (Դն 2.18), այլ բացատրութեամբ՝ Աստուծոյ կ'աղօթէին, որ արժանի ըլլան հասկնալու:

Երրորդ՝ անոնք կը խոստովանէին, թէ ծածուկ բաներ հասկնալը իրենց սեփական կարողութենէն չէր գար, այլ Աստուծոյ իմաստութիւնն է, որ այդ շնորհքը կ'ընծայէր (հմտաւ Դն 2.20): Այդ իմաստութիւնն էր, որ հասկնալի կը դարձնէր տեսիլքները կամ Աստուած հրեշտակի միջոցաւ կը բացատրէր զանոնք (տե՛ս Դն 8.17):

Երեմիայի մարգարէութեան մէջ սուտ տեսիլքներէ զգուշացում կայ: Մարգարէն գրած է. «Զօրքերու Տէրը այսպէս կ'ըսէ.՝ Ձեզի մարգարէութիւն ընողներու խօսքերուն մտիկ մի՛ ընէք. անոնք ունայնութեան կը տանին ձեզ, իրենց սրտին տեսիլքը կը խօսին, ո՛չ թէ

Տիրոջ բերնէն» (Եր 23.16): Այս զգուշացման վրայ՝ ասիկա է հարցումը, որ կը դրուի: Ինչպէ՞ս գիտնալ, թէ ո՞ր մէկ տեսիլքը ճշմարիտ է, եւ ո՞րմէկը՝ սուտ:

«Իրենց սրտին տեսիլքը կը խօսին, ո՛չ թէ Տիրոջ բերնէն»: Ասոր մէջ է Աստուածաշունչին դատանիչը: Որեւէ տեսիլք, որ Աստուծոյ խօսքէն ուրիշ բաներ կ'ըսէ՝ սուտ տեսիլք է: Տեսիլքի մը վաւերականութիւնը յայտնի կ'ըլլայ, երբ անիկա Աստուածաշունչէն տարբեր բաներ չ'ըսեր: Աստուածաշունչը Աստուծոյ կամքին յայտնութիւնը կը բովանդակէ, «Տիրոջ բերնէն» ելած են այնտեղ հաւաքուած պատգամները: Եթէ տեսիլք մը Աստուծոյ կամքին յայտնութիւնն է, ապա անոր իւրաքանչիւր տարրը Աստուածաշունչին կամ Աստուծոյ խօսքին հաւատարիմ է:

**ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ
ՄԱՏԹԷՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԻՆ**

ՀԵՌԵԱՍ՝ ՉԱՐԵՀ ԱՐՔ. ԱԶՆԱԲՈՐԵԱՆ
ԽԱՐԱԳԻՐ՝ ԳԱՌԱՅԱ Ք. Գ.

Թ

ՅԻՍՈՒԱ ԿԵ ԿԱՆՁԷ ՄԱՏԹԷՈՍԸ (9-13):

«Յիսուս այդտեղէն քիչ մը առաջ երթալով՝ տեսաւ մաքաւար մը, Մատթէոս անունով, որ մաքս գանձելու նստած էր, եւ ըսաւ անոր.

- Հետեւէ՛ ինձի:

Մատթէոս ոտքի ելաւ եւ հետեւեցաւ Յիսուսի: Եւ մինչ անոր տան մէջ սեղան բազմած էր, շատ մը մաքաւարներ եւ մեղաւորներ ալ եկան եւ նստան Յիսուսի եւ իր աշակերտներուն հետ: Երբ Փարիսեցիները տեսան ասիկա, ըսին Յիսուսի աշակերտներուն.

- Ինչո՞ւ ձեր վարդապետը մաքաւարներուն եւ մեղաւորներուն հետ կ'նստէ:

Յիսուս երբ լսեց ասիկա, ըսաւ անոնց.

- Առողջներ չեն որ բժիշկի պէտք ունին, այլ՝ հիւանդները: Գացէք եւ սորվեցէք թէ ի՞նչ կը նշանակէ Աստուծոյ սա խօսքը. Ողորմութիւն կ'նւզեմ եւ ո՛չ թէ գոհ: Որովհետեւ չեկայ արդարները կանչելու, այլ՝ մեղաւորները»:

Աւանդութիւնը այս մաքսաւոր Մատթէոսը կը ճանչնայ իբր առաջին աւետարանին հեղինակ: Հետաքրքրական է, որ Մարկոսի աւետարանին մէջ նոյն այս դրուագին ընտրեալը Ղեւի անունը ունի (Մկ 2.14): Ասիկա պատճառ եղած է, որ եզրակացուի, թէ Ղեւի եւ Մատթէոս նոյն անձն էին: Շատ հաւանական է այս եզրակացութիւնը:

Մատթէոսի նախկին անունն էր Ղեւի: Եւ

բնական է, որ ան իր աւետարանին մէջ պիտի գործածէր ո՛չ թէ իր նախկին անունը, այլ այն մէկը, որով գինք կը ճանչնային քրիստոնեայ համայնքներ:

Երբ Մատթէոսի 10-րդ գլուխին կը նայինք, տասներկու առաքեալներու ցանկին մէջ՝ Մատթէոսի անունն առջեւ նշուած կը գտնենք անոր մաքսաւորի հանգամանքը: Մարկոս ալ իր ցանկին մէջ Մատթէոս անունէն առաջ՝ «մաքսաւոր» բացատրականը գրած է (Մկ 3.18): Ղուկասի մօտ այդ կոչումը չկայ (Ղկ 6.15):

Մատթէոս ուզած է իր անունը արձանագրել պաշտօնին յիշատակութեամբ. նախ՝ որովհետեւ մաքսաւորութենէ առաքելական պաշտօնի կանչուելուն մէջ անպատուութիւն չէ տեսած: Եւ ուզած է ցոյց տալ, որ Յիսուսի կողմէ կ'ընտրուին նաեւ մեղաւոր մարդիկ, որպէսզի ծառայեն Աստուծոյ փրկագործական ծրագրին:

(Մաքսաւորը այն անձն էր, որ պետութեան հաշուոյն տուրք կամ մաքս կը գանձէր գոյքերու կամ ապրանքներու վրայ: Հռոմէական կայսրութեան մէջ տարածուած օրէնք մըն էր. երբ երկրէ երկիր կամ քաղաքէ քաղաք որեւէ գոյք կամ ապրանք կը փոխադրուէր, սահմաններուն վրայ պաշտօնեաներ կ'ըլլային, որոնք սեղաններու վրայ կը նստէին եւ ըստ գոյքի կամ ապրանքի արժէքին մաքս կը գանձէին):

Մաքսաւորը պետական պաշտօնեայ մըն էր, եւ այդ պատճառով ալ սիրելի չէր հրեաներուն: Ինչո՞ւ: Որովհետեւ հրեաները կ'ուզէին իրենց ազգային անկախ պետականութիւնը ունենալ: Թէպէտ ունէին թագաւորութիւն մը, որ սակայն Հռոմէական կայսրութեան ճորտ կամ ենթակայ թագաւորութիւն մըն էր: Հրեաները կատարի կերպով կ'ատէին օտարին տիրապետութիւնը, նաեւ կ'ատէին անոնց բոլոր պաշտօնեաները: Հետեւաբար, մաքսաւորները ատելի էին իրենց, որովհետեւ հռոմէացիներու համար կ'աշխատէին):

Երկրորդ պատճառ մըն ալ կայ անոնց ատելի ըլլալուն մէջ: Շատ մաքսաւորներ կային, որոնք օրինաւոր ձեւով չէին կատարեր իրենց պաշտօնը:

Ներկայ ժամանակներու պետական պաշտօնեաներ կը ճանչնանք չէ՞: Բոլոր ժամանակներուն ալ նոյնը եղած է: Պաշտօնեաներ կը փորձէին շահագործել՝ առաւելագոյն գումար իրենց գրպանը

լեցնելու համար: Մաքսաւորութիւնը անխղճութեան խորհրդանշան էր:

Ասիկա այլ պատճառ մըն էր, որ մաքսաւորները ոչ թէ միայն ժողովրդական մակարդակի վրայ ատելի ըլլային, այլ նաեւ կրօնական շրջանակին կողմէ ալ արհամարհուած ըլլային: Բոլոր Փարիսեցիներուն եւ Օրէնքի ուսուցիչներուն կողմէ մաքսաւորները կը համարուէին անընդունելի, նաեւ անընդունակ իրենց կրօնական կեանքին մասնակցելու, ուստի կը մերժուէին:

«Յիսուս այդտեղէն քիչ մը առաջ երթալով՝ տեսաւ մաքսաւոր մը»: Ո՞ւր էր այդ տեղը: Այս աւետարանին ընթերցումով չենք կրնար գիտնալ: Բայց երբ կը կարդանք Մարկոսի աւետարանը՝ լուսաբանութիւն կը գտնենք: Մարկոս կը յիշէ, թէ Յիսուս Կափառնաուս մէջ էր, եւ հոնկէ Գալիլիայի լիճին եզերքը գնաց: Մինչ կ'երթար, կը հանդիպի Մատթէոսի, որ մաքս գանձելու նստած էր (Մկ 2.1, 13-14): Վայրը ուր Յիսուս Մատթէոսը գտաւ, երկրին հիւսիսային բերանն էր:

Հագիւ տեսած, Յիսուս Մատթէոսի կ'ըսէ. «Հետեւէ՛ ինձի»:

Մենք գիտենք, որ Յիսուս միւսաշակերտներն ալ կանչած ատեն, նոյն կոչը ուղղեց: Կոչը բաւարար եղաւ, որ ընտրեալները ձգեն ամէն ինչ եւ իրեն հետեւին:

Ինչպէ՞ս եղաւ, որ մէկ անգամէն աշակերտները ձգելով ամէն ինչ՝ Յիսուսի հետեւեցան:

Առանց նախապատրաստութեան, արդեօք կարելի՞ է երեւակայել նման բան մը:

Երբ կը կարդանք Յովհաննէսի աւետարանին առաջին գլուխը (35-51 հմրք) կը տեսնենք, որ առաջին ընտրեալ աշակերտները Յիսուսի հանդիպած էին Հրէաստանի մէջ: Անոր մասին լսած էին եւ անոնց հոգիները նախապատրաստուած էին: Եւ երբ Յիսուս անոնց հետեւելու կոչը ուղղեց՝ միացան իրեն:

Մատթէոսի պարագային մենք տեղեակ չենք, թէ ան նախապատրաստուած էր կամ ոչ: Արդեօք ան լսած էր Յիսուսի քարոզութիւնը: Իր պաշտօնը այնպիսին էր, որ դժուար թէ ինք կարենար իր սեղանը ձգել եւ երթալ Յիսուսը լսելու: Ուրեմն, կրնանք ենթադրել, որ Մատթէոս առաջին անգամն է, որ Յիսուսը իր դիմաց կը գտնէր եւ գայն կը լսէր: Յիսուսի կոչին վրայ անոր անմիջապէս հետեւիլը՝ կը զարմացնէ մեզ:

Արդար է խորհիլ, թէ Յիսուսի խօսքը Մատթէոսի ինքնութիւնը փոխեց, գայն իրեն հետեւող դարձուց: Ան գիտէր, թէ իր պաշտօնին բերումով, որքան ատելի էր իր ազգակիցներէն: Հաւանաբար ատիկա զինք մղած էր ինքզինքին իբր մեղաւոր նայելու, Աստուծոյ առջեւ ինքզինք անարժան տեսնելու: Եւ ահա յանկարծ իրեն կը մօտենար բացառիկ անձ մը (տակաւին այն ատեն Յիսուսի աստուածային ինքնութիւնը չէր յայտնուած), որուն հուշակը իմացած էր: Մինչ ուրիշներ զինք կ'ատէին, այս հրաշագործ վարդապետը իրեն հետեւու կոչ կ'ուղղէր: Իրեն համար մեծագոյն անակնկալ մըն էր այդ բացառիկ անձին ցուցաբերած վերաբերումը եւ հաստատ կոչը: Որուն վրայ ան հոգեփոխութիւն մը ապրեցաւ եւ անմիջապէս Յիսուսի հետեւող դարձաւ, որովհետեւ իր կեանքին գերագոյն կոչումը գտաւ եւ լուծումը իր ներքին տագնապին ու բժշկութիւնը իր մեղաւորութեան:

Կը տեսնենք յետոյ, որ Յիսուս Մատթէոսի տան մէջ բազմած էր, եւ իրեն հետ էին շատ մը մաքսաւորներ: Բնական էր, որ Մատթէոս իր պաշտօնակիցները եւս հրաւիրած ըլլար ընդունելութեան:

Այնտեղ «մեղաւորներ» ալ կային, կ'ըսէ: Որո՞նք էին անոնք:

Այն ժամանակի հրէական կեանքին մէջ, կը կարծէին թէ ոչ հրեաները մեղաւորներ էին: Ըստ հրեաներուն, միակ ժողովուրդը որ զԱստուած կը ճանչնար, միակ ժողովուրդը որ Աստուծոյ փրկութեան արժանացած էր եբրայեցի ժողովուրդն էր: Բոլոր միւս ժողովուրդները մեղաւորներ էին: Եւ այդ պատճառով ալ ուրիշ ազգի մարդոց հետ որեւէ կապ չէին ուզեր ունենալ:

Արդեօք «մեղաւորներ»ով հեթանոսներո՞ւ կ'ակնարկուի:

Մատթէոս իբր պետական պաշտօնեայ՝ ունէր իր մեծաւորները, որոնք հոռմէացիներ էին, եւ զանոնք ալ կանչած էր, կ'ենթադրեմ: Եւ մաքսաւորներուն հետ՝ անոնք ալ նստած էին Յիսուսի հետ:

Փարիսեցիներ ասիկա տեսնելով, կը սկսին մեղադրել Յիսուսը: Բայց փոխանակ իրենց խօսքը Յիսուսի ուղղելու՝ անոր աշակերտներուն կ'ուղղեն:

Այս մեղադրանքին պատճառը փորձեցինք հասկնալ:

Յիսուս երբեք նկատի չէր առնել իր ժամանակի իրենք զիրենք բարեպաշտ կոչող

մարդոց տեսակէտը: Գիտէր որ շատերու աչքին խորթ պիտի թուէր մաքսաւորներուն եւ ոչ հրեաներուն հետ իր նստիլը, սակայն նկատի չէր առնէր: Քանի որ իր նպատակը բարձր էր, այսինքն՝ առ մարդ՝ աստուածային սէրը կ'ուզէր յայտնել:

Յիսուս բաւարարուած է պատասխանելով. «Առողջները չեն որ բժիշկի պէտք ունին, այլ հիւանդները»: Ապա՝ «Փացէք եւ սորվեցէք թէ ի՛նչ կը նշանակէ Աստուծոյ սա խօսքը. Ողորմութիւն կ'ուզեմ եւ ո՛չ թէ գոհ»: Ասիկա քաղուած է Ովսէէի մարգարէութենէն: Աստուծոյ խօսքը մէջբերելէ ետքը, հետեւեալ բացատրութիւնը կուտայ. «Որովհետեւ չեկայ արդարները կանչելու, այլ՝ մեղաւորները»:

Ի՞նչ կ'ըսեն այս երեք խօսքերը:

«Առողջները չեն որ բժիշկի պէտք ունին, այլ հիւանդները»:

Այս խօսքը բաւական հասկնալի է. չեմ կարծեր որ դժուարութիւն մը կը ներկայացնէ: «Առողջներ»ը՝ անմեղներն են, իսկ «հիւանդներ»ը՝ մեղաւորներն են:

Խօսքերուն կարգը փոխելով՝ պիտի առնեմ վերջինը. Յիսուս կ'ըսէ. «չեկայ արդարները կանչելու, այլ՝ մեղաւորները»:

Որո՞նք են այս «արդարներ»ը:

Նախ յստակացնեմ, որ Յիսուս ըսել չ'ուզեր, որ ինք արդարներով չզբաղիր: Այստեղ «արդար» անունը գործածուած է հեզնական նշանակութեամբ: Այսինքն՝ Յիսուսի ակնարկութիւնը կը վերաբերի բոլոր անոնց՝ որոնք իրենք զիրենք արդար կը համարէին: Իրենք զիրենք արդար համարողները աւելի մեղաւոր են քան նոյնինքն մեղաւորները: Թէ արդարներ կա՞ն Աստուծոյ աչքին:

Աստուածաշունչին մէջ երկու պատասխաններ կան. ըստ Հռոմէացիներու նամակին, որուն հաստատումը Սաղմոսներէն կու գայ, նոյնիսկ մէկ հատիկ արդար չկայ (Հռ 3.10, Սղ 14.1): Այս պարագային բացարձակ հասկացողութեամբ առնուած է որակումը:

Եւ սակայն Յիսուս ինք կը խօսի Հին Կտակարանեան ժամանակներու բազմաթիւ արդարներու մասին, երբ իր աշակերտներուն կ'ըսէ, թէ որքան մարգարէներ եւ արդարներ ուզեցին տեսնել այն՝ ինչ որ դուք կը տեսնէք, եւ չտեսան (Մտ 13.17): Արդ, կային արդարներ: Այս իմաստով արդարները անոնք են, որոնք իրենց ներկայ կեանքին մէջ կը փորձեն տեւականօրէն Աստուծոյ կամքին եւ ծրագրին համաձայն ապրիլ:

Իսկ այստեղ «արդար» բառը ուրիշ իմաստ ունի:

Ինչո՞ւ Յիսուս Աստուծոյ խօսքը կը յիշեցնէ. «Ողորմութիւն կ'ուզեմ եւ ո՛չ թէ գոհ»:

Որո՞նց կ'ուզէ այս խօսքը:

Փարիսեցիներուն:

Ինչո՞ւ:

Աստուածային ներումը յայտնելու համար: Մատթէոսը կանչելը՝ աստուածային ներումի արարք էր:

Յիսուս ըսել կ'ուզէր, թէ դուք որ գիտ կը մեղադրէք, ըսելով՝ «մաքսաւորներուն եւ մեղաւորներուն հետ կ'ուտէ», յիշեցէ՛ք թէ Աստուած ի՞նչ կ'ըսէ: Աստուած ձեւական պաշտամո՞ւնք մը կը պահանջէ: Ո՛չ: Պաշտամունք մը կրնայ շատ լաւ կարգ կանոն եւ մատուցում ունենալ, նոյնիսկ՝ անթերի ըլլալ, բայց կրնայ հաղորդակից չըլլալ Աստուծոյ պահանջքին: Աստուծոյ բուն պահանջքը պաշտամունք չէ, այլ՝ ողորմութիւն: Աստուած բարեպաշտական արարքներէն աւելի՝ սիրոյ եւ գթութեան արարքներ կը պահանջէ: Ան կ'ուզէ, որ մեր նմաններուն հանդէպ արհամարհական վարմունք չորդեգրենք: Քանի որ այդպիսի ընթացք մը կորուստի կ'առաջնորդէ: Այլ որդեգրենք Աստուծոյ վարմունքը, որ սիրոյ եւ գթութեան վերաբերում մըն է:

Յաջորդ հատուածին անցնելէ առաջ, կ'ուզեմ այստեղ նշել բնագրագիտական հարց մը:

Կարգ մը ձեռագիրներ, վերջին նախադասութեան «մեղաւորները» բառէն ետք կ'աւելցնեն՝ «ապաշխարութեան» բառը: Հնագոյն ձեռագիրներու մէջ չկայ անիկա: Ուստի, ետքը աւելցուած է: Բառը խօսքին մէջ նոր իմաստ մը չ'աւելցնէր, այլ պարզապէս բացատրական յաւելում մըն է: Մեղաւորները Երկինքի արքայութեան ապաշխարութեամբ է, որ արժանի կ'ըլլան: Այս «չեկայ արդարները կանչելու, այլ՝ մեղաւորները» խօսքը լուսաբանող առակն է՝ Մեծ Խնճոյքի առակը (Ղկ 14.16-24), որուն աւարտին՝ տէրը ընդվզած իր կազմակերպած մեծ ընթրիքին հրաւիրեալներու մերժումէն՝ ծառային հրամայած է, ըսելով. «Քաղաքէն դուրս գնա եւ ճամբաներուն վրայ ու դաշտերուն մէջ ո՛վ որ գտնես՝ ստիպէ որ գայ, որպէսզի տունը լեցուի»: Այս միտքով է, որ Յիսուս նստած էր մաքսաւորներուն եւ մեղաւորներուն հետ:

(Շարունակելի 37)

ԵՐԵՍՆՕՐԵԱԿ

Հրագաբթոր, 18 Յոհանս 2009

11.00 Աղօթածողով՝

Քոյրերու ժողով՝

Կրոնար, 21 Յոհանս 2009

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ

Երեբաբթոր, 23 Յոհանս 2009

19.00 Ֆիլմի ցուցադրութիւն

“The Sea Inside”

Հրագաբթոր, 25 Յոհանս 2009

11.00 Աղօթածողով՝

Քոյրերու ժողով՝

Հաբաթ, 27 Յոհանս 2009

ԳԻՏ ՆՇԱՐԱԾ

Կրոնար, 28 Յոհանս 2009

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ

Հրագաբթոր, 02 Յոհանս 2009

Ս. ՍԱՀԱԿ ԵՒ Ս. ՄԵԱՐՈՊ

11.00 Աղօթածողով՝

Քոյրերու ժողով՝

Կրոնար, 05 Յոհանս 2009

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ

Հրագաբթոր, 09 Յոհանս 2009

11.00 Աղօթածողով՝

Քոյրերու ժողով՝

Կրոնար, 12 Յոհանս 2009

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ

Հրագաբթոր, 16 Յոհանս 2009

11.00 Աղօթածողով՝

Քոյրերու ժողով՝

Կրոնար, 19 Յոհանս 2009

ՎԱՐՊԱՎԱՅ

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ



**ՀՈՎԻԷԸ
ԸՆՏԱՆՏԻՔՆԵՐՈՒՄՆ ՄԷՁ**

Անոնք որ կը փափաքին
հովիւին այցելութիւնը ունենալ
իրենց տունէն ներս,
թող բարեհաճին դիմել
Տ. Գառնիկ Քինյ. Գոյունեանի,
հեռաձայնելով 514 331 5445 x203
կամ՝ 514 909 5203 թիւերէն մէկուն:

Հոգեհանգստեան շեր
արձանագրութիւնները նախօրօք
կանարե՛ծէք կառուելով
ԵԿԵՂԵՅՈՅ ԴԻԿՆԱՏՈՒՄ

Սոյն թերթիւը Ե-ՆԱԿԱԿՈՎ ԱՏԱՆԱԼՈՒ
ՀԱՄԱՐ ՁԵՐ Ե-ՀԱՍՅԷՆ ՈՒՊՊԱՐԿԵՅԷՔ
eglise58@sourphagop.com-իւ

ՀԻՔԱՆՈՒՆԵՐՈՒ ԱՅԵԼՈՒԹԻՒՄ
Բարեհաճեցէք հեռաձայնել Արժ. Տ.
Գառնիկ Քինյ. Գոյունեանի.
514 331 5445 x203 կամ 514 909 5203

Նախորդ թիւերը կրնաք գտնել
www.sourphagop.org/lradou
ԿԱՅԷԶԻՆ ՎՐԱՅ